

Վ. Ա. ԼԵՔԱՅԵՆ, *Ղրիմի հայկական գաղութի պատմություն*,
Երևան, 1964, 427 էջ, գինը 80 կոպեկ:

Քաղաքական դաժան իրադարձությունների բերումով հայ ժողովրդի կեսից ավելին հարկադրված է եղել թողնել իր հայրենի օջախը և դիմել օտարության: Դժիշտ է նկատել լեռն, որ հայ ժողովրդի պատմությունը, սկսած VIII դարից, այլևս հայրենիքում ապրող հայության պատմությունը չէ միայն, այլ իր շրջանակների մեջ պիտի առնի մեր թափառնիկ հայության պատմությունը ևս: Իրապես, անկարելի է կաղմել հայ ժողովրդի ամբողջական և դիտական պատմությունը առանց սփյուռքահայության պատմության:

Զի կարելի ասել, թե հայադիտության մեջ բոլորովին անտեսվել է հայ զաղթավայրերի պատմությունը: Գրվել են առանձին զաղթավայրերին նվիրված մի շարք աշխատություններ: Նդիպտահայ ականավոր պատմարան Ա. Ալպոյաճյանը նույնիսկ փորձել է կաղմել հայ զաղթավայրերի ամբողջական պատմությունը և հրատարակել այդ աշխատության երեք հատորը:

Գնահատելով կատարված աշխատանքները, արժեքավորելով հրատարակված փաստական նյութերը, սակայն պետք է ասենք, որ նրանք շատ հեռու են ժամանակակից պատմադիտական պահանջները բավարարելուց: Նրանց մեջ չեն բացահայտվում հայկական համայնքների ներքին կյանքը, սոցիալական տարրեր խավերի գոյավիճակը, դասակարգային ներհակությունները և այլն: Ուրախալի երևույթ պետք է համարել, որ Հայկական ՍՍՌ-ի ԳԱ Պատմության ինստիտուտի ստեղծագործական հարկի տակ վերջերս սկսել է արդեն հասակ առնել և հանդես գալ երիտասարդ մարքսիստ պատմաբանների մի խումր՝ հայ զաղթավայրերի պատմությանը նվիրված բարձրարժեք ուսումնասիրություններով:

Հայ զաղթավայրերի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների այդ շարքում իր կարեւոր տեղն ունի Վ. Միքայելյանի գրախոսվող աշխատությունը:

Ղրիմը հայկական հնագույն և խոշորագույն զաղթավայրերից մեկն է եղել, նա դարեր շարունակ հանգրվան է հանդիսացել հյուսիս-արևմրտյան ուղղությամբ շարժվող հայ զաղթական-

նության, նա կամրջակ է եղել հայ ժողովրդի և սլավոնական ու արևմտաեվրոպական մի շարք ժողովուրդների միջև, ուստի նրա պատմությունը արժանի է հատուկ ուշադրության: Պետք է նկատել նաև, որ Ղրիմի միջնադարյան պատմության վերաբերյալ սակավ են պատմական սկզբնաղբյուրները, ուստի և ամեն մի նոր փաստ և տեղեկություն արժեքավոր է նաև թերակղզու ընդհանուր պատմության համար:

Վ. Միքայելյանի աշխատությունը գրված է անտիպ և տպագիր պատմական հարուստ նյութի հիման վրա: Հեղինակը մխրճվել է Մատենադարանի հարյուրավոր ձեռագրերի մեջ, նրանց հիշատակարաններից և հիշատակագրություններից բաղել պատմական այն բոլոր նյութերը, որոնք վերաբերում են իր թեմային և գրանք բոլորը գիտական շրջանառության մեջ է դրել:

Պատմական աղբյուրների մյուս խումբը հանդիսացել են Կաֆա քաղաքի ջենովական ֆակտորիայի լատիներեն գրված վավերագրերը, որոնք լրացնում են հայկական աղբյուրների տեղեկությունները և ստուգում նրանց հավաստիությունը: Ինչ վերաբերում է XVII—XVIII դարերի ղրիմահայ պատմությանը, ապա այդ շրջանի նյութերի զգալի մասը Միքայելյանը վերցրել է Մոսկվայի, Լենինգրադի, Բախչիսարայի և Երևանի արխիվային վավերագրերից: Բարեխիղճ ձևով նա օգտվել է նաև հայ պատմիչների և ժամանակագիրների, եվրոպական ուղեգիրների, ռուսական տարեգիրների արժեքավոր տեղեկություններից: Մենք գծվարանում ենք մատնացույց անել տվյալ թեմային վերաբերող որևէ աշխատություն, որ վրիպած լինի հեղինակի ուշագրությունից:

Ղրիմի զաղթավայրի պատմությանը նվիրված են մի քանի աշխատություններ (Մ. Բժշկյանի, Բ. Քուլենբյանի, Հ. Տեր-Աբրահամյանի, Ա. Ալպոյաճյանի, Խ. Փորթչյանի, ռուս որոշ դիտականների և այլն), որոնց վրա կանգ է առել և որոնք վերլուծել է հեղինակն իր աշխատության ներածության մեջ: Ուստի, չի կարելի համաձայնվել Միքայելյանի այն ձևակերպման հետ, որ «Ղրիմի հայկական գաղութի պատմությունը տակավին չակոսված մի խոպան է»:

Ներածության մեջ հեղինակը տվել է իր օգտագործած գրականության և աղբյուրների տեսությունը։ Սկզբունքային առարկություն չունենք ներածության նկատմամբ։ Ցանկալի էր, միայն, որ հեղինակը փոքր-ինչ ավելի կառնեք առնեք նեւ-վիտայի «ալյսմավուրք»-ի պարունակած՝ Ղրիմի պատմության նշանավոր հիշատակարանի և Մարտիրոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմու երկրի» աղբյուրների վրա և ցույց տաք նրանց մեջ եղած պատմական տեղեկությունների սկզբնաղբյուրը և հավաստիությունը։ Ըիշտ է, հեղինակն այդ հարցին անդրադարձել է, սակայն համառոտակի և ոչ իր տեղում։

Պատմական առաջին կարևոր հարցը, որ բնութաբան է առնված տվյալ աշխատության մեջ, Ղրիմի հայ գաղթավայրի սկզբնավորության հարցն է— երբ է հիմնվել զրիմահայ գաղթավայրը։ Հեղինակն անհրաժեշտ է համարել այս հարցի վրա հանգամանորեն կանգ առնել և լուսարմենել, որովհետև հայագիտական ուսումնասիրությունների մեջ երկու իրարամերձ կարծիքներ են հայտնվել։ Ոմանք հայ գաղթավայրի հիմնումը դրել են XIV դարից, իսկ ոմանք՝ XI դարից։

Միջայելյանը հայկական, լատինական, հունական աղբյուրներից բաղմաթիվ պատմական փաստեր է բերել և համոզիչ ձևով ցույց տվել, որ Ղրիմի հայ գաղթավայրը ստեղծվել է ոչ թե XIV դարում՝ 1330 թվականին՝ Ախսարայից Ղրիմ եկած գաղթականությունից հետո, այլ՝ դրա հետ առաջ, Ղրիմում հայկական գաղթավայր է եղել XI դարից սկսած, և առաջին հայ գաղթականական հոսանքը եկել է ոչ թե Վուզայի ափերից, այլ Բյուզանդիայից, Բալկաններից և Տրապիզոնից։ Այդ են ապացուցում հետևյալ փաստերը. 1281—1290 թթ. Կաֆայի նոտարական ակտերից հայ բնակչության մասին եղած տեղեկությունները, հունական «Սինակսար»-ի 1292 թ. ծաղատկի կապակցությամբ Սուղակ քաղաքում հայերի և հույների միջև առաջացած վեճի մասին եղած հիշատակությունը, Փարիզի ազգային մատենադարանի սեփականությունը հանդիսացող 1305 թ. Կաֆայում գրված «Ճառերնտիր»-ը, Սուղակում XIII դ. մի շարք հայ մարդկանց տապանաքարերը՝ հունարեն տապանագրերով, Ռուբրուկի տեղեկությունը՝ սուղակում 1253 թ. հայ համայնքի և հայոց եպիսկոպոսի կողմից իրեն լավ բնդունելություն ցույց տալու մասին, 1316 թ. Կաֆայում երեք հայկական եկեղեցի լինելու մասին և այլ տեղեկություններ։ Որոնք մեջ է բերել հեղինակը։ Մատնացույց արված փաստերը հավաստի են և հեղինակի հարցադրումը՝ անվիճելի։ Սակայն XIV դարից առաջ Ղրիմում հայ համայնքի գոյության փաստարկների շարքում անհարկի բեր-

ված են այնպիսիները, որոնք ենթակա են ստուգման։ Թվարկներ դրանցից մի քանիսը.

1. Միջայելյանը պնդում է, որ Սուղակում 1006 թ. դատիկը տոնելու կապակցությամբ հայերի և հույների մեջ վեճ է եղել։ հույներն այդ տարի դատիկը տոնել են ապրիլի 6-ին, իսկ հայերը՝ ապրիլի 13-ին (էջ 49)։ Այդ տեղեկությունը ճիշտ լինել չի կարող, քանի որ 1006 թ. հայերը և հույները դատիկը տոնել են միասին, ապրիլի 21-ին։ Ծաղատիկը եղել է 1007 թ. երբ հույները տոնել են ապրիլի 6-ին, իսկ հայերը՝ մի շարաթ հետո՝ ապրիլի 13-ին։ Հավանական է այդ թյուրիմացությունը թվականի շփոթության հետևանքով և առաջացել։

2. Համոզիչ չէ հեղինակի առարկությունը Բարկովին՝ Թեոդոսիայի թանգարանի այսպես կոչված «Անիի շիրիմաքարի» ժամանակի որոշման հարցում։ Բժշկյանը այդ արձանագրության թվականը կարդացել է ՆՂԶ. այսինքն՝ 1027 (476 + 551 = 1027)։ Ենթադրվել է, որ քարը սայլով իրենց հետ են բերել Անիի գաղթականները։ Իսկ Բարկովը, ակադեմիկոս Օրբելու օգնությամբ, այդ թվականն առաջարկել է ուղղել 929 ձևով, այսինքն՝ 1327 (776 + 551 = 1327)։ Միջայելյանը առարկում է այդ ուղղման դեմ։ Նշված քարի լուսանկարը մենք ունենք ձեռքի տակ, ուստի կարող ենք որոշակի ասել, որ Բարկովի, ավելի ճիշտ՝ Օրբելու ուղղումը, ճիշտ է։

3. Բոլոր է հեղինակը իր պաշտպանության տակ վերցնում Քուչուկ-Հովհաննիսյանի՝ Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցու պատի մեջ եղած արձանագրության թվականի սխալ վերծանությունը՝ 1047 թվականով։ Մենք ճիշտ ենք համարում Օրբելու ուղղումը, որն առաջարկում է «Մկրտիչն... բնկղմեցաւ ի մեջ ծովու թվականի ՆՂԶ (496 + 551 = 1047) պարբերությունը կարգալ «Մկրտիչն... բնկղմեցաւ ի մեջ ծովու թվականին ՌԶ (1005 + 551 = 1556)։ Ենք-ն այստեղ «թուականի» բառի որոշիչ հոգն է։

Համաձայնվելով ակադ. Տիխոմիրովի և ներկա աշխատության հեղինակի հետ՝ Դաշկեիչին ուղղված քննադատության հարցում, որը անհիմն կերպով Ֆեոդոր Դմիտրևիչի՝ երկու հազար հայերի օգնությամբ գալու առթիվ մեզ հասած հրավարտակր համարել է կեղծիք, գտնում ենք, որ այդ հրավարտակր թվականը սխալ է վերծանվում պատմագիտության մեջ։ Մեր կարծիքով, լատինական բնագրում մատնացույց արված թվականը ոչ թե քրիստոնեական գործածական ներկա թվականն է, այլ՝ հռոմեականը։ Այդ հաշվով՝ նշված 1062-ին պետք է գումարել 248 (Հռոմի հիմնադրման երկրորդ հազարամյակի սկիզբը՝ Փիլիպոս կայսեր ժամանակ), որով կստացվի 1310։ Թվականի այս նոր հաշվով պետք է փնտրել Գալի-

քիայում Ֆեոդոր Դմիտրևիչ անունով իշխանին:

Ուշագրավ հարցեր են քննարկված աշխատության երկրորդ գլխում, որը վերնագրված է Վրիմի իւանությունը և հայ աղղարնակություն տեղաբաշխումը Տալիկիայում: Հակառակ որոշ պատմաբանների, որոնք զրիմահայ սլատմությունը ուսումնասիրել են մեկուսացված, առանձնացված իր շրջապատից, հեղինակն աշխատել է զրիմահայ գաղթավայրի պատմությունը քննության առնել թերակողմնականորեն պատմության հետ սերտորեն առնչված՝ աշխատելով ցույց տալ այն փոխհարաբերությունը, որ գոյություն է ունեցել հայերի և թաթարների, հայերի և Ղրիմի ծովափնյա շրջանում բնակություն հաստատած ջենովացիների միջև:

Հիմնվելով նեպոլեոնի ռուսամասերի հիշատակարանի տեղեկության վրա, Միքայելյանը անդրադարձել է 1330 թ. Ախսարայից Ղրիմ եկած դանգվածային խոշոր հայ գաղթականության հարցին և ցույց տվել գաղթականների տեղաբաշխումը թերակողմնականորեն հիշատակարանների հիման վրա պարզել է միաժամանակ, թե որ վայրերում հիմնվեցին հայկական գաղթօջախները: Հեղինակը մատնացույց է արել հետևյալ զրիմահայ գաղթօջախները՝ Կաֆան (Քեոդոսիան), Սուրխաթը (Էսկի կամ Հին Ղրիմ), Սուդզան (Սուրոժ), Կեոզեվը (Ծվպատորիան), Լարասու-բադարը (Բելոգորսկը), Ակմեչիթը (Սիմֆերոպոլը), Բաղչիսարայը, Չեմբալոն (Իսլավկավան), Օրաբադարը (Արմյանսկը) և այլ քաղաքներ ու ավաններ:

Ղրիմահայ գաղթականների շատ ու քիչ ասլահով վիճակը դեպի Ղրիմ է քաշում գաղթականության նոր հոսանքներ ինչպես մայր հայրենիքից, այնպես էլ Կիլիկիայից ու հայկական գաղթավայրերից: Շուտով Ղրիմում այնքան ստվար հայություն է կենտրոնանում, որ Ղրիմի թերակողմնական արևելյան մասը կոչվում է «Մովային Հայաստան» («Armenia Maritima»): Սխալվում է հեղինակ Ա. Լ. Յակոբսոնը, երբ կարծում է, թե այդ անվանումը Ղրիմի հայ գաղթականներին տվել են իրենք՝ «հայ պատմիչները»: Ղրիմը «Մովային Հայաստան» են կոչել ոչ թե Ղրիմի հայերը, այլ նրանց ջենովացի հարևանները: Կաթոլիկ Ծվգենիոս պապը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, իր 1432 թ. Սուդզայի հայությանն ուղարկած կոնդակում Ղրիմի հայ գաղթավայրին նույնիսկ «Մեծ Հայաստան» անուն է տվել «In parlious Armeniae maiores»: (Մեծ Հայաստանի կողմերը):

Որքան հայ բնակչություն է ունեցել Ղրիմի հայ գաղթավայրը իր ծավալուն շրջանում: Միքայելյանը համաձայնվում է Պ. Քուսմանյանի և Հ. Աճառյանի հետ, ըստ որոնց Ղրիմում եղել է 300.000-ից մինչև կես միլիոն բնակչություն:

Չնայած անցյալում ճշգրիտ մարդահամար գոյություն չի ունեցել և դժվար է ճիշտ թիվ ասել, սակայն հիմք ունենալով պատմական որոշ հիշատակագրություններ, կարելի է ասել, որ 300.000-ից կես միլիոն թիվը չափազանցված է: Հայտնի է, որ 1778 թ. զրիմահայության թիվը նոր Նախիջևան տեղափոխվելիս հասնում էր մոտ 13 հազարի: Եթե ենթադրենք, որ 1475 թ. թուրքերի՝ Ղրիմը գրավելուց հետո բնակչությունը գաղթեց ուրիշ երկրներ և բնակչության թիվը պակասեց ավելի քան տասնամյակ, ապա դարձյալ 1475-ից առաջ նման թվով հայ գաղթականություն Ղրիմում չի եղել չէր կարող: Պետք է նկատի ունենալ նաև, որ XVII դարի սկզբներում բավական թվով նոր գաղթականություն է եկել Ղրիմ: Մեր կարծիքով, զրիմահայության թիվը XIV—XV դարերում ավելի չի եղել 150—200 հազարից:

Հարուստ նյութերով է շարադրված աշխատության երրորդ գլուխը, որը վերնագրված է «Սոցիալ-տնտեսական հարաբերությունները գաղթում»: Ելնելով մարքսիստական պատմագրության հիմնական դրույթներից, հեղինակը փաստական հարուստ նյութերով հակադրվում է հայ պատմագրության մեջ քաղաքացիություն ստացած այն սխալ կոնցեպցիային, որ իբրև թե զրիմահայությունը սոցիալական խորը շերտավորում, սոցիալական ներհակություններ չի ունեցել և հայ գաղթականներն իրար հետ ապրել են համերաշխ հարաբերությամբ: Միքայելյանը հանգամանորեն կանգ է առել հայ համայնքի սոցիալական տարրեր խավերի, նրանց գործունեության շրջանակի, իրավական վիճակի վրա և այլն:

Ղրիմահայ բնակչության հիմնական մասը հանդիսացել են գյուղացիությունը և արհեստավորությունը: Հայ գյուղացիները իրենց հետ թերակողմնական բնակչության մշակությունը և զարգացրել մի շարք կուլտուրաներ, մասնավորապես խաղողագործությունը:

Քաղաքային հայ բնակչության մյուս ստվար հատվածը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, հանդիսացել են արհեստավորները և նավահանգիստներում աշխատող բանվորները: Այս մասում ուշագրավ են այն տեղեկությունները, որոնք բերում է Միքայելյանը Մատենադարանի: 3797 ձեռագրի հիշատակարաններից: Այնտեղ թվարկված են այն բոլոր արհեստավորները, որոնք փող են տվել տվյալ ձեռագիրը գրելու համար: Ձեռագրում հիշվում են՝ Քաղնոս ներկարարը, Քորոս ջուլհակը, Մելիքսեզ ոսկերիչը, Սարգիս դանկարը, կտավագործ Ամպետը, կոշկակար Պարոնշահը, հյուսն Ստեփանոսը, դարբին Հեթումը, սանդրագործ Պարոնշահը, քաթանագործ Մարգարը և այլ արհեստավորներ:

Շատ ավելի մանրամասն հեղինակը կանգ է առել հայ առևտրականների գործունեության լուսարանման վրա, որոնք զործակցելով տեղի չենովական առևտրականների հետ, աչ ու ձախ կտրում էին Սև. Ազովի և Միչերկրական ծովերը՝ նրանցից ոմանք ունեին իրենց սեփական նավերը, իսկ Զենովալում՝ նավաշինական գործարաններ։ Հայ խոջաների ձեռքումն էր փաստորեն Կաֆայից դեպի Բալկաններ և Հնհաստան տանող քարավանային ճանապարհը։ Հայ խոջաները կապված էին Տրապիզոնի, Քավրիզի և Սուլթանիի հետ, որոնք այդ ժամանակ առևտրաշահ ամենախոշոր կենտրոններն էին Արևելքի տարանցիկ ուղու վրա։

Միքայելյանի հրատարակած նյութերն անվիճելի ապացուցում են այն խոշոր դերը, որն իր ժամանակին ունեցել են Ղրիմի հայ զաղթօջախները ոչ միայն թերակղզու տնտեսական ներքին կյանքում, այլև միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում։

Հեղինակն այս ղխում ցույց է տվել նաև դրիմահայ համայնքի ներսում ղրություն ունեցող սոցիալական ներհակությունները։ Մեծահաուստ հայ խոջաները, ջենովացիների հետ գործակցած, շահագործում էին ոչ միայն տեղի հույն, թաթար և այլ ազգերի, այլև իրենց ազգից աշխատավորությանը։

Մոցիալ-տնտեսական հարաբերություններին նվիրված ղխում վերին աստիճանի ուշադրավ են այն տեղեկությունները, որոնք վերաբերում են Կաֆայի, Սուդդայի և Չեմրալոյի աշխատավորության ընդվզումներին՝ ընդդեմ իրենց շահագործողների։ Այս շարժումների ընթացքում հայ աշխատավորությունը հանդես է եկել հույն, թաթար և այլ ազգերի աշխատավորների հետ ձեռք-ձեռքի տված։ Զենովական վավերագրերում, որոնցից մեջբերումներ է անում հեղինակը, տեղեկություններ են արձանագրված 1433 թ. Չեմրալոյի աշխատավորության ապստամբության մասին, որի այիքները արաղ անցել են հարևան քաղաքները և ղյուղերը։ Ապստամբությունը ճնշվել է ջենովական օ հազար հոգուց բաղկացած ղորամասերի միջոցով։ 1454 թ. ընդվզել են Կաֆայի աշխատավորները, որոնք մաքառել են իրենց շահագործողների դեմ՝ եկեցե ժողովուրդը. «Մահ ազնվականներին» լողուղենքով։ Անմիջապես Կաֆայի հայ համայնքին են վերաբերում Միքայելյանի հրապարակած այն նյութերը, որոնք կապված են Կաֆայի հայ աշխատավորության պայքարի հետ՝ տեղի մեծահարուստ շրջանի դեմ՝ թեմական առաջնորդի թեկնածուի առաջադրման հարցում։

Կցանկանայինք սակայն, որ այս ղխում Միքայելյանն օղտագործեր ջենովական աղբյուրներում արձանագրված ուշադրավ մի այլ տեղեկու-

թյուն ևս, որը վերաբերում է Կաֆայի հայ րեակչության կազմակերպած մասսայական ցույցին ընդդեմ հայ խոջաներից մեկի (Քութու րեյի), երբ վրդովված հայ աշխատավորները ցույցի են դուրս դալիս և շարժվում փողոցով դեպի Կոնստանդինոպոլիս՝ Քուրչի՝ Քութու րեյը՝ րացականչություններով, իսկ քաղաքի կոնսուլը, վախենալով ցուցարարներից, ինչպես ինքը՝ կոնսուլն է ղրում, թաքնվում է իր բնակարանում։

Միքայելյանը կանգ է առել նաև Վատիկանի Ղրիմի հայ զաղթավայրի նկատմամբ վարած քաղաքականության վրա և ցույց տվել նրա փորձերը՝ ջենովական իշխանությունների աջակցությամբ կաթոլիկ դարձնելու դրիմահայությանը։ Ղրիմահայությունը, հատկապես աշխատավորությունը, ընդդիմացել է դրան։ Կաթոլիկություն են ընդունել ղխավորապես հայ մեծահարուստ այլաքերված շրջանները, որոնց տնտեսական շահերը, ինչպես հիմնավորում է Միքայելյանը, սերտորեն կապված են եղել Իտալիայի և կաթոլիկ այլ երկրների հետ։ Հեղինակը ճիշտ է նկատել, որ այդ պայքարը կրոնական միջդավանական անիմաստ պայքար չի եղել. «ազգային եկեղեցու և դավանանքի համար մղած պայքարը օբյեկտիվորեն պայքար էր ազգապահպանման համար։ Այդ պայքարում միաժամանակ նշմարվում էին սոցիալական մոտիվներ» (էջ 244)։

Միքայելյանն իր աշխատության շորորող ղխում կանգ է առել 1475 թ. թուրք նվաճողների կողմից Կաֆայի ղրավման փաստի վրա։ Այստեղ նա, մեր կարծիքով, տեղին է քննադատում կաթոլիկ պատմաբան Սեստրենցևիչ-Բոդուշին և նրան հետևող Վ. Խ. Կոնդարակին, Ն. Մուրզակիչին և այլ պատմաբանների, որոնք Կաֆայի ջենովական իշխանությունների անկաթությունը վարագուրելու միտումով աշխատում են ցույց տալ, որ իրը թե տեղի հայերը Կաֆան թուրքերի կողմից շրջապատված ժամանակ պահանջվող ջանասիրությամբ չեն կովել։ Միքայելյանը մեջ բերելով դեպքերին ականատես տաղերգու Ներսես Կաֆայեցու հաղորդած հավաստի տեղեկությունը, ցույց է տալիս, որ իրականում հինգ օր շարունակ թուրքական րանակին կուրծքը դեմ տվող և Կաֆայում թուրքերի դեմ քաղաքը կովողները հանդիսացել են հայերը և հույները։ Բայց ի՞նչ կարող էին անել նրանք, երբ քաղաքը նախապես ապահովված չէր ոչ պարենով և ոչ թնդանոթով, երբ կովի վճռական պահին դավաճանեցին և թուրքերի կողմն անցան ավելի քան 60 հազար թաթարներ և սկսեցին խփել քաղաքի պաշտպանների թիկունքից, երբ թշնամին կտրեց քաղաքի ջուրը, իսկ ջենովական րարձը ղինվորականությունը փախուստի ղիմեց։

Քննադատությունն ավելի ղիպուկ դարձնելու համար ցանկալի էր, որ Միքայելյանը մատնաշ

ցույց անելու նաև քաղաքի շինովացի գանձապահի դավաճանությունը, որը դադարի բանակցությունների մեջ էր մտել թուրքական հրամանատարության հետ և նրան հանձնել քաղաքի դարպասի բանալիները: Ղրիմահայերի հերոսական դիմադրությունը ցույց տալու համար կարելի էր նաև մատնացույց անել Սուլթանի հերոսամարտը, ուր հայերը, հույները և իտալացիները հերոսաբար կռվեցին թուրքերի դեմ և բոլորն էլ ընկան անհավասար մարտում:

Ղրիմի թուրքերի կողմից նվաճվելուց հետո թերակղզում ստեղծվեց նոր իրադրություն: Ուստի անհրաժեշտ էր, որ Միջայելյանը Ղրիմի հայ գաղթավայրի պատմությունը թուրք-թաթարական տիրապետության շրջանում ներկայացներ առանձին գլխով, ավելի մանրամասն կանգ առնելով ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների վրա:

Միջայելյանը փաստեր է բերել այն մասին, թե ինչպես թուրք-թաթարները անընդմեջ հարձակվում էին Ոկրահնայի վրա և այնտեղից գերիներ բերում՝ արևելյան շուկաներում վաճառքի հանելու համար: Իկյ՝ թաթարական իշխանությունների եկամտի հիմնական աղբյուրներից մեկն էր: Հայտնի է այսպիսի մի դեպք, երբ սուլթանը չի համաձայնվում Ղրիմի խաներից մեկին թույլ տալ ասպատակության դուրս գալու դեպքի մուսաստան՝ գերիներ բերելու համար, խանը

բողոքում է սուլթանին. «Դու թույլ չես տալիս ինձ ասպատակության ղեկավար, ապա ի՞նչ ուտեմ ես, ինչպե՞ս ապրեմ»: Ստրկավաճառության շուկաներում թուրքերը և թաթարները այնքան շատ էին ուս գերիներ բերում, որ եգիպտացի մի խոշա հարցրել է ստրկավաճառներից մեկին. «Իկյ՝ քան գերի, որ դուք բերում եք հյուսիսից, այնտեղ մարդ մեռնում է»: Միջայելյանը հրապարակել է բազմաթիվ փաստեր այն մասին, որ հայ խոջանները խոշոր գործ են կատարել՝ գերեզմանության մեջ գտնվող ոռոսներին օգնելու և զորությունից ազատելու համար:

Իշխատության մեջ բավական հարուստ փաստերով է ներկայացված ղրիմահայ մշակույթի բաժինը: Իկյ կարևոր է ոչ միայն գաղթավայրի պատմության, այլև հայ մշակույթի պատմության համար ընդհանրապես:

«Ղրիմի հայկական գաղութի պատմության» մեջ ըննարկված են շատ այլ հարցեր ևս, որոնց վրա ներկա գրախոսականում մենք կանգ առնելու հնարավորություն չունենք:

Պատմական գիտությունների թեկնածու Վ. Ի. Միջայելյանը կատարել է գիտական լուրջ աշխատանք Ղրիմի հայ գաղթավայրի պատմության ուսումնասիրության գործում: Նրա աշխատությունը կարևոր ներդրում է հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության բնագավառում:

Պրոֆ. Ա. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ

PAUL Z. PEDOUKIAN. *Coinage of Cilician Armenia*. The American Numismatic Society, New York, 1962, pp. 496.

ԶԱՐԵՀ Պ. ՊԵՏՐԻԱՅԱՆ. *Կիլիկյան Հայաստանի դրամները*. Ամերիկյան դրամագիտական ընկերություն, Վիեննա, 1963, 496 էջ:

Կիլիկյայի հայկական դրամների նոր հայտնաբերումները, որոնք կատարվել են վերջին 50—60 տարիների ընթացքում, մեծապես հարստացրել են Սմյունայի, Ամերիկայի ու Ասիայի նշանավոր թանգարանների դրամագիտական բաժինները: Պետական ժողովածուներից բացի աճել են նաև անհատական հավաքածուները: Աշխարհի տարբեր վայրերում պահվող այդ ողջ դրամագիտական նյութի ամբողջական ուսումնասիրությունը և հրատարակությունը վաղուց հասանազատ խնդիր է ոչ միայն դրամագիտության, այլև ընդհանրապես արևելագիտության ու մասնավորապես հայագիտության համար:

Դեռևս անցյալ դարի կեսերից հայկական դրամագիտության երախտավորներ Վ. Հանգլուսայի և Կ. Միայելյանի կողմից թեև մշակվեցին Կիլի-

կիայի հայկական դրամների գաղափարական սկզբունքները, սակայն նրանց կորագրած ստեղծումը մնում էր սրբաբանական: Եվ ահա 70 տարի անց Զարեհ Պ. Պետրիայանի անխնայ ջանքերով 1962 և 1963 թթ. անդրերևելյան հրատարակվեց «Կիլիկյան Հայաստանի դրամները» գիրքը, մի գործ, որ ամենայն իրավամբ հանդիսանում է խոշոր ներդրում դրամագիտության մեջ: Հայաստան դրամների այնպիսի հավաքականություն է հրատարակված այս գրքում, որպիսին չեն տալիս հայ դրամագիտության երախտը բոլոր հրատարակությունները միասին վերցրած: Ի պատիվ Զ. Պ. Պետրիայանի պետք է ասել, որ այդ նյութը ուսումնասիրված է ոչ թե առանձին հրատարակություններից բաղադրված հիշատակումներով, այլ անմիջականորեն դրամներից